Գերամեծար գերյարգելի Աբբայհօր մերոյ Ստեփաննոսի վրդ.ի ողջոյն

Թուղթ ԺԺԹ

... Շարժ մեծ եղեալ է ի կողմանս սիւրիոյ. և վասն շամ, այսինքն դամասկոսի քաղաքին ասի, թէ յոյժ մեծ վնաս եղեալ է նմա ի շարժէն. ամենայն ճամիք նորա փլեալք են. և ընդ նոսա նաև այն մեծ ճամին, զորմէ ասի զոլ չինուած նոյա ըստ ամենայն բանի նման չինուածոյ այգր եղեալ եկեղեցւոյ սրբոյն մարկոսի և մինարէն նորա կործանեալ, զորմէ առասպելաբանեն տաճիկք ընդ այն իջանել Քրիստոսի յաւուրն, յորում գալոց է առնել զընդհանրական դատաստան։ Այլ և անբաւ տունք այնր քաղաքի փլեալք, և ոլք յոտին երևին մնացեալք, բնաւքն ճաթռտեալք, և կասկածելիք ի բնակիլ. և անհուն մարդիք մեռեալք ի ներքոյ փլատակաց։ Այն շարժ եղեալ է և ի Թրիպօլիս, ի յանթաքիայ և ի Սայտայ և յայլուր յայնս կողմանս. ուստի տաճիկք ստամպօլու ամենեքին սասանեալ կան։...

Դեռ հալածանքն նոյն է. և ոչ կարեմք շրջիլ ի խալաթիայ. և ժամք փռանկաց փակեալ կան վասն ուղղափառաց։...

1759 — *Նուաստ ծառայ*

Դեկտ. 30 [*ի Կ. Պոլիս*] — *Հ. Զաքարիա վ. Ա.*

ՄԻԷ.

Ահա պետական ներքին շարժում մը, որ և պատճառ կ'ըլլայ ժողովրդեան ահաբեկումին։ Մաչու չափ կը տուժեն և երեք հայեր կախաղանին վրայ։

Գերամեծար գերյարգելի Աբբայհօր մերոյ Ստեփաննոսի վրդ.ի՝ ողջոյն

Առակցութիւն ՃԻ Թղթոյս

... պատահեաց դիպուած ինչ... ժողովեցան ամենայն կարդացօղք ի տաճկաց և ըմբռնալք ի ներքս անդ ի պալատ թագաւորին վասն իրաց ինչ. (և ասի թէ այն իրն է այս, զի ի միոյ չէհզատէէ, որ յաջորդն է ներկայ թագաւորիս, ծնեալ է արու մանուկ մի, և ներկայ թագաւորս կամեցեալ է զայն մանուկ սպանանել. և ի հակառակիլ հօր մանկանն, մեծ շփոթ ինչ ելեալ է ի ներքս անդ ի պալատն). և իբրև խորհուրդն այն յամեաց ժամս ինչ, չարսըցիք յերկիւղէ թէ փոխեն զթագաւորն շփոթս ինչ յարուցին, և սկսան զսնտուկս իւրեանց ափալ թափալ ի պէզէստէնն կրել և փախուստ առնուլ և զհացս ի փռանց յափշտակել. յայսմ շփոթէ հալխին մեծ երկիւղ եղև յստամպօլ. և ապա ի միւս օրն որոնումն եղև յարքունուստ փախստէից, և զսնտուկսն զառաջինն ի պէզէստէնն կրողաց, և զերիս ի հայոց ազգէ առաջի կրպակաց իւրեանց կախեցին[1], յորոց մինն էր անկոթօղլուն, և զչորս հայս ևս ի քիւրէկն առաքեցին, և ամենեքին ի դողութեան են այժմ և բազումք թագուցեալք...։

1760 *յունվարի* 16 [*Կ. Պոլիս*] — *Նուաստ ծառայ*

Հ. Զաքարիա վ. Ա.

---

1. *«Ի դուրսմէջ չարշըն յերեսէի տեղիս, և էին սոքա սամաթիացիք անկօթօղլու զարբէլը... և Թողին կալ կախեալ զաւուրս չորս ի նշանակ ամենեցուն. և եդին գիր գրեալ ի վերայ լանջաց երեցունց. առաջնոյն գրեալ այսպէս, թէ արժանի է պատուհասի, որ առաջնորդ լինի և պատճառ ապստամբութեան, երկրորդին՝ թէ արժանի է, որ յափշտակութիւն հացի առնէ, երրորդին՝ թէ արժանի է որ զաղմուկ արկանէ ի մէջ ամբոխին ի շուկայն»* (*Գր. Հ. Իգնատիոս առ Մելքոնեան, Կ. Պոլիս* 1760, *յունվ.* 19).